ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Ան գձ Սհան
Ջ բձ Մարկոս
Ակ գկ Ղուկա(ս)
Քկ դկ Մաթոս:

Թ. 1բ.—Նուէր Ս. Սարգիս եկեղեցւոյն Լօնտօնի, Խաչիկ Խան Սարաճեանի կողմանէ:

Այս Աւետարանին վրայ իրենց երդումը կատարեցին Լօնտօնի առաջին երեսփոխանները: 6 մարտի 1926 թ.:

Թ. 2ա. Ձեռագիրք Թաւրիզու № 66:

Թ. 119ա.—Միլտոն:

Թ. 131ա.—Միլտոն:

Թ. 250բ.—Դարձեալ յերես անգեալ ալաչեմք զձեզ ով մանգուանք սուրբ եկեղեցոյ որք կարդալով կամ ալրինակելով կամ տեսանելով զվերին ընտացող Սուրբ Աւետարանիս զուստայ Միրանն, որ ընտացաւ զսայ յիշատակ իւրն և ծնաւղացն իւրոց ուստայ Յակոբին և կողակցին իւրոյ Տայուսին, և իւր զաւակին Ճանփաշին, Նիկարին: Քրիստոս Աստուած աւրհնէ զու(ս)տայ զՄիրաան և զիւր որդին զԽուփիայր և զՇահիկուլ, որ և զմայրն սոցա զՀոռոփսիմայն. յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ, ամէն:

Թ. 251ա.—Դարձեալ վերջին ստացող Սուրբ Աւետարանիս Ռըստակէս բահանայէս, որ ստացայ Մեսրովբ եպիսկոպոսէ զԱւետարանս ի հալալ ընչից իմոց, առի ԺՌ (10,000—Ն. Մ.) դահեկ(ան), յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հօրն իմ Խուպանին, մաւրն իմ Պէկիխաթունին, կողակիցն իմ Տիլպարին, որդոյն իմոյ Զաքարայ, նորաբողբոջ սարկաւագին Ադամին, առհասարակ ամենայն աշխատողացն սոցայ, յիշեցէք զտեառն ամի ի թվ. ՌԺԵ (1566 թ.—Ն. Մ.), ի յառաջնորդութեան սրբոյ աթոռոյս Ստեփէի Ըստեփանոս արհեպիսկոպոսի, ի թագաւորութեան Շահ Թահմազին, կաթողիկոսութեան Էջմիածնին Տէր Միքայէլին:

Թ. 251բ.—Աւետարանական բուժկութեամբ:

Թ. 252ա.—(Կա չորս տող սրբված և անընթեռնելի գրություն):

(Պահպանակի վրա) 252 թերթ, 26-11-1969 թ.:

№ 328

ՖԵՐՄԱՆ

(Տաճկերեն)

Թերթերը՝ 1:—Մեծությունը՝ 77×52 սմ.:—**Նյութը՝** մաքուր դիմացկուն հաստ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միապյուն:—**Դատարկ թղթեր՝** 1բ:—**Տողերը՝** 22:—**Գծումներ՝** չունի:—**Գիրը՝** արաբերեն նասխի տառեր:—**Զարդագրություն՝** ֆերմանի վերևի մասում կա բրգաձև մի եռանկյուն (խարիսխը՝ 43 սմ. և բարձրությունը՝ 36 սմ. չափերով), որ ունի միջակ որակի զարդանկարչություն: Կենտրոնում նկարված է կարմիր վարդեր և կապույտ այլ ծաղիկներ, իսկ ներքևի երկու ծայրերում կան մանր կարմիր ծաղիկներով երկու կանաչ ճյուղեր: Եռանկյան մյուս մասերում նկարված են ոսկեգույն զարդեր:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1798 թ.:—**Վայրը՝** անհայտ (շատ հավանաբար Թուրքիա):—**Մանոթություն՝** սույն տաճկերեն ֆերմանը հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական դիվանի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայազգի գերիներին առանց փողի ազատելու մասին է սույն ֆերմանը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ֆերմանի ներքևի ձախակողմյան ծայրամասում կա տվողի ստորագրությունը, իսկ կոնակում գրված է հիջրայի 1213 թվականը (1798 թ.—Ն. Մ.):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆերմանի աջակողմյան լուսանցքում կա երկու տող տաճկերեն գրություն և օվալաձև փոքրիկ մի կնիք:

Կա նաև հայերեն հետևյալ գրությունը.—

Եթէ ազգէն մերմէ գնրի հանդիպի բուռն զօրութեամբ կարող լինիմք առանց փողի. այս է հոսման

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի №№ Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի №№ Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի №№ Ա—Գ-ից, Ը-ից և 1974 թվականի № Գ-ից:

հրովարտաքիս ի տէրութենէ 1218ին (արաբերեն թվերով գրված)։

№ 324

ՖԵՐՄԱՆ

(Տաճկերեն)

Թերթերը՝ 1։—**Մեծությունը՝** 70×49,5 սմ.։—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ։—**Կազմ՝** չունի։—**Պահպանակներ՝** չունի։—**Վիճակը՝** բավարար, սակայն վերևի մասում մի մեծ կտոր թուղթ պատռված է։—**Գրությունը՝** միապյուն։—**Դատարկ թղթերը՝** 1բ։—**Տողերը՝** 8։—**Գծումներ՝** չունի։—**Գիրը՝** արաբերեն նասխի տառեր։—**Զարդագրություն՝** չունի, սակայն ֆերմանի վերևի մասում կա իսլամական տուղրան, բառերն ու տառերը մեջտեղ ընդելուզված։—**Գրիչը՝** անհայտ։—**Պատվիրատուն՝** անհայտ։—**Ժամանակը՝** 17-րդ դար։—**Վայրը՝** անհայտ (շատ հավանաբար Թուրքիա)։—**Ծանոթություն՝** սույն տաճկերեն ֆերմանը հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական դիվանի արխիվից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սույն ֆերմանը վերաբերում է Լիմ անապատին (վանքին) տուրք տալու մասին։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ֆերմանի ներքևի ձախակողմյան ծայրամասում կա տվողի ստորագրությունը։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆերմանի կոնակում հայերեն գրված է հետևյալը.—

Գասապաներու ու գիւղերու մարդկանց հետ Լիմ ու Անպտ., երբէք պարտաւորութիւն չունի Լիմ Անպտ. տուրք տալու հաւասարապէս։

Ռշկե (1687 թ.—Ն. Մ.) թարեղին (թվականին—Ն. Մ.)։

Վանքի հողոյն է ֆարմանս Էջմիածնէ։

№ 325

ՖԵՐՄԱՆ

(Տաճկերեն)

Թերթերը՝ 1։—**Մեծությունը՝** 78×51 սմ.։—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ։—**Կազմ՝** չունի։—**Պահպանակներ՝** չունի։—**Վիճակը՝** անբավարար, երկու եզերքները մաշված և պատռված են։—**Գրությունը՝** միապյուն։—**Դատարկ թղթերը՝** 1բ։—**Տողերը՝** 11։—**Գծումներ՝** չունի։—**Գիրը՝** արաբերեն նասխի տառեր։—**Զարդագրություն՝** չունի, սակայն ֆերմանի վերևի մասում կա իսլամական տուղրան, բառերն ու տառերը մեջտեղ ընդելուզված և նկարված կարմիր ներկով։—**Գրիչը՝** անհայտ։—**Պատվիրատուն՝** շատ հավանաբար Թուրքիայի Սուլթան Սելիմ 3-րդը (1789—1808 թթ.)։—**Ժամանակը՝** 18—19-րդ դարեր։—**Վայրը՝** շատ հավանաբար Կոստանդնուպոլիս։—**Ծանոթություն՝** սույն տաճկերեն ֆերմանը հանված է Մայր Աթոռի կաթողիկոսական դիվանի արխիվից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լիմ անապատի (վանքի) այգիների և արտերի պաշտպանության մասին է։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ֆերմանի ներքևի ձախակողմյան ծայրամասում կա տվողի ստորագրությունը։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆերմանի կոնակում հայերեն գրված է հետևյալը.—

Լիմ Անպտ.ի այգեներուն, պաղչաներուն և արտերուն ոչ ոք ընդդէմ չկենան յայլազգաց.Սուլթան Սէլիմ թագաւորի տուեալն է։

Խարաճ չտալու և այլ հարկաւոր ֆէրմաներն է, լաւ պահելոյ է։

Օրինակ մէգն է։

Խարաջ և այլ բաներ չտալու ֆէրման է։

Ջրաղացքն և այլն պահելով։

Երկու օրինակն ևս մէկն վաւերացել։

Բացի այդ ֆերմանի կոնակում կպցված է Օսմանյան Թուրքիայի մի նամակադրոշմ, հինգ ղրուշ արժեքով, բաց կապույտ գույնով։ Վրան ձեռագիր մի քանի թվեր կան գրված։

№ 326

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Թերթերը՝ 154։—**Պրակները՝** 14, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի ԺԴ՝ 1, ԺԱ՝ 7, Ա և Է՝ 10, Դ և Ը՝ 11, և մի հավելվածական պրակ է ավելացել հետագայում (8 թերթանոց) ԺԱ և ԺԲ պրակների միջև։—**Մեծությունը՝** 20,7×14×2,2 սմ.։—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ։—**Կազմ՝** չունի։—**Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հաստ թուղթ։—**Վիճակը՝** անբավարար, թերի, շատ թերթեր թափվել և կտրատվել են։—**Գրությունը՝** երկսյուն։—**Դատարկ թղթեր՝** չունի։—**Տողերը՝** անհամաչափ, 20—32։—**Գծումները՝** ճրնշումով։—**Գիրը՝** բոլորգիր, մի քանի տեսակի, խառը։—**Զարդագրություն՝** ունի շատ հաստարակ մանրանկարչություն։ Ձեռագրում կա ընդամենը մի քանի հաստարակ զարդագրեր և թոչնագրեր, լուսանցազարդեր և թոչուններ։—**Գրիչը՝** Սարգիս քահանա։—**Պատվիրատուն՝** նույնինքն գրիչն է։—**Ծաղկողը՝** անհայտ։—**Ժամանակը՝** 16-րդ դար։—**Վայրը՝** անհայտ, սակայն շատ հավանաբար Սպահան (Ջուղա)։—**Ծանոթություն՝** ձեռագիրն ստացվել է նվեր մի հայրենակցից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրն ուշ շրջանի մի կանոնագիրք է, որտեղ խոսվում է ընդունված կանոնների, ինչպես նաև խնամիական կապերի մասին։ Մի քանի էջերում (թթ. 36ա, 37ա, 37բ, 38ա, 38բ, 39բ և 40ա) տրված է պատկերավոր սխեմաներ, որտեղ ցույց են տրվում թույլատրելի և ոչ-թույլատրելի խնամիական և ամուսնական կապերը։

Թ. 104ա.—Ցանկ կանոնաց Լուսաւորչին՝ ա. քահանայից և աշխարհականաց.

բ. նախանձու.
գ. մեղաց.
դ. կենաց.
և. դժոխաց.
զ. կախարդաց.
է. ապանողաց.
ը. կախարդաց.
թ. դիահարաց.
ժ. ծնընդոց դիւաց.
ժա. քաչանց. ...

Կանոնք սրբոյն Պարթևի: Դարձեալ հարցմունք և պատասխանի:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 3բ.—Ողորմի Քրիստոս Աստուած ընտացողի գրոցս Առաքելին, Գրիգորին և մարն Թուրվանտէ, և իր կողակցին Խանիկան, և մեծ հարն Մուրատին, և ին մեղօք խոսնցեալ գրիչս զՍարգիս քահանայ այս կարդացող(աց):

Թ. 19ա.—Ողորմածն և գթածն մեղաւորաց իւր անճառելի մարդեղութեամբն տնաւրինեաց, զիւր առատ գթութեամբն ողորմեսցի ընտացողի գրոց պէտրէ Տէր Աւաքին, և հօրն Յովհաննիսին, և մօրն Մայրամին, և իւր կողակցին Ազկուէ, և Թամամին, և որդոցն Պաղտասարին, և ինձ Սարգիս գրչի:

Թ. 24ա.—Զոր ողորմածն ամենայնի Տէրն Քրիստոս ողորմեսցի յիւր առատ ողորմութեամբն ամենայն ազգիս Քրիստոսադանանցիս ամէն, ևս առաւել զտացող գրոցս Առաքելին, Աստուածատուրին, և որդոյն Պետրոսին, և մօրն Եսէին, Պողոսին, Իսկէնտէրին:

Թ. 32բ.—Որ ողորմածն Քրիստոս ամենայնի ողորմեսցի ընտացողի գրիս Միրանին, Յակոբին, և որդոյն Միրէնշէ, և մարն Խանիմաթին, և որդոյն Ղարիաշին, Խաչատուրին, և քրոչն Ճիհանին, Յովանիսին և ինձ Սարգիս գրչի, կարդացողաց:

Թ. 35ա.—Որ ողորմի Քրիստոս Աստուած մեր ատացողի գրոցս Միրէնին, Մուրատին և իւր կողակցին Կուլիսսէնին, և թոռնանցն Կասպարին, և Պաղտարին, և ինձ Սարգի(ս) գրչի, կարդացողաց և լսողաց:

Թ. 38ա.—Ով սուրբ ընթերցող+կարդաս և ակսիս զմեղաւոր գծողս զՍարգիս քահանայս յիշեայ:

Թ. 39բ.—Ողորմի Քրիստոս ընտացողի Ղութլուշենց Մուրատին և հարն Քիսսոնին և մար Մաղթումին և իւր կողակցին Ղրմըզին և որդուն Աշուպին, Անիկան, և ինձ մեղաւք Սարգի(ս), գրչի, կարդացողաց:

Թ. 42ա.—Թէ դպիր ես կարդա, թէ չէ վզիտ տուր ու հազա. զընտացող գրիս Կարապետին, հօրն Յովանիսին, և մար Մայրամին և որդոյն Կասպարին, և Կուլիստէնին, կարդացողաց:

Թ. 48բ.—Ընտացող գրիս Մարգարտին, և հօրն Աղաճանին, և մօրն Շինոֆորին, և եղբօրն Մուրատին, կարդացողաց:

Թ. 50բ.—Զոր ողորմածն Աստուած ողորմեսցի զտացողի գրոցս Անտոնին, դստերն Թուվանտէ, և Կուլիստէնին, և իւր կողակցին Ճոնարին, և որդոյն Աղուպին, և հօրն Ֆոանգշին, և մօրն Մայրամին, Անդրիասին, կարդացողաց:

Թ. 58ա.—...ևս առաւել զտացող և զգծող գրիս զառանացեալս ի մէջ մեղաց և ի զբաղմանց աշխարհիս որ չեմ արժան յիշել և կարգի զՍարգիս անարժան քահանայ, և զհայրն իմ զՏէր Առաքելն և զմայրն իմ զԽիմաթն, և զորդիսն իմ զՏէր Արրա(հա)մն և զԱստուածայտուր սարկաւագն, և զկենակիցն իմ զՄուղալն, և զարեան մերձաւորքն իմ որոց փոխեալ են առ Քրիստոս, Սարգսին, Պապային, և մարն Տոլվաթին, և իւր կողակցին Մայրամին, և Սարգիս գրիչ:

Թ. 65բ.—Զոր ողորմածն Աստուած ողորմեսցի ընտացողի գրիս զՏէր Սարգիս քահանայս, և զհայրն իմ զՏէր Առաքելն, և զմայրն իմ զԽիմաթն, և զկենակիցն իմ զՄուղալն, և զայլ ամենայն արեան մերձաւորքն իմ են որ աստ կան ի մարմնի ի դառնաբեր ժամանակի, և այ(լ)քն որ փոխեալ են առ Քրիստոս յոյսն ամենայն հաւատացելոցն և մեզ յիշելոցս և ձեզ յիշելոցս առհասարակ ողորմեսցի ի միւս անգամ գալըստեան իւրում, կարդացողաց և լսողաց որոց ասէ ասէ ամէն:

Թ. 73ա.—Ողորմեայ գծող գրիս, զտառապեալ Սարգիս անարժան քահանայիս, ևս առաւել Զաքարի, և ծնողին զԽոնարին, և զԵղիային, և զայլ ամենայն արեան մերձաւորացն ամէն, Աղուպին և հարն Տատուրին և իւր կողակցին Փաշահն, և մար Խաթունին, և ինձ Սարգիս գրչի, կարդացողաց:

Թ. 78ա:—Զոր ողորմած Աստուած որպէս աւազակին, և մաքսապետին, և պոռնկին, և յանդամալուծին, բարէկամիտ Ղազարին, նոյն ողորմութեամբ ողորմեսցի զթաղծեալս և յամենայն առեալս ի մէջ անց որ զբաղմանց զՍարգիս անարժ(ան) գրիչս և զտացողս սուրբ գրիս Հանիսին և հարն օտարին, և մարն Տօնային, Անտոնին, և Մաթէոսին, և Խաչատուրին:

Թ. 84ա.—Ընտացողի գրոցս Կուլիստէնին, Մայրամին, և Սրբոհէ, և Սրբոհէ, և որդոցն Խաչատուրին, և Մարտիրոսին, Զաքարին, և հարն Էմիրճանին, և մարն Խպթէ, և դստերն Կուլիստէնին, որդոյն Յախիճանին, կարդացողաց:

Թ. 86բ.—Ընտացողի գրոցս Կուռնէ, և որդոյն Աստուածատուրին, և դստերն Խաթունշին, և իւր կողակցին Սելչուկին, և Մելտոնին, կարդացողաց:

Թ. 94ա.—Որ ողորմի Քրիստոս ընտացողի գրոցս Խճքէ, և որդոյն Պետրոսին, և Պողոսին, և Սարգսին, Առաքելին, և իւր կողակցին Տոլվաթին, և ինձ Սարգիս գրչի, կարադցողաց և լսողաց:

Թ. 97բ.—Որ ողորմի Քրիստոս Աստուած ընտացողի գրոցս Կասպարին, և եղբարն Աստուածատուրին, և հօրն Սիմէոնին, և մար Դիաթին և Սարգիս գրչի:

Թ. 104ա.—Որ ողորմի Քրիստոս Աստուած ընտացողի գրոցս Հաքիմին, Աղուպին, և հարն Սարգսին, և մարն Լէլչուկին, և որդոյն Սարգսին, Ներսէսին, Առաքելին, և կողակցին Դիճեկան, կարդացողաց:

Թ. 117ա.—Ողորմէա Տէր ընտացողի գրոցս Մար-

տիրոսին և կողակցին Խաթունշէ, և որդոյն Սաթէ Ցովանիսին, Մսրին, կարդացողաց:

Թ. 138բ.—Որ ողորմի Քրիստոս Աստուած ըստացողի գրոցս (թ. 139ա) Ցակոբի որդոյն, Ցովանիսին որդոյն Աղաճանին, և իր կողակցին Մայրամին, և Արիճանին, և դստերն Ղրմըզին, և Ազկուէ, ինձ Սարգիս գրչի, կարդացողաց:

Թ. 149ա.—Քրիստոս Աստուած ողորմեա ըստացողի գրոցս խօճա Ցակոբին, Ցովանիսին, և որդոյն Աղաճանին, և իր կողակցին Մայրամին, և Արիճանին, և դստերն Ղրմըզին, և Ազկուէ, կարդացողաց:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկզբի պահպանակի վրա)

231, Կանոնագիրք, 23:

24, 23, 231, Սարգիս մէթ:

Թ. 7ա.—Աւետիսըս եղև ՌԲՃԷ-ին (1758 թ.—Ն. Մ.) Հոկտեմբերի Է-ին, օրըն չորեքշաբթին: 1217:

Թ. 13բ.—Այս է նախնիքն իմ, յետ բազմաց քահանայից, զորս լուեալ եմք է Տէր Առաքել, նրա որդին Տէր Սարգիսն գծող գրքոյս, նրա որդին Տէր (Աստուած)ատուրն, նրա որդին Սարգի(ս) Դէլութէրզի մակակոչեալն, նրա որդի Տէր Պողոսն, որ ՌՃԺԴ-ին (1665 թ.—Ն. Մ.) ծնեալ էր և ՌՃՂԲ-ին (1713 թ.—Ն. Մ.) վախճան կալաւ, նրա որդին Տէր Պարսամն, որ ՌՃԾ-ին (1701 թ.—Ն. Մ.) ծնեալ է և ՌՃՀԶ-ին (1727 թ.—Ն. Մ.) քահանայ է օծեալ, և նրա որդին Իգնատիոս աբեղաս, որ ՌՃՀԱ-ին (1722 թ.—Ն. Մ.) ծնեալ եմ, ՌՃՂԲ-ին (1743 թ.—Ն. Մ.) քահանայ օծեալ, ծնունդն և օծումն իմ Ե Դեկտեմբերի (Թ. 14ա) և ՌՃՂԴ-ին (1744 թ.—Ն. Մ.) առի իշխանութիւն ծայրագոյն գաւազանի ի Պետրոս վարդապետէս, ի մայիս ամսոյ և ՌՃՂ... (174... թ.—Ն. Մ.) առի օծ(ումն) եպիսկոպոսութեան ի ձեռամբ Տեառն Ղազարոս ամենայն հայոց կաթողիկոսի...:

Թ. 14բ.—Ես մեղայոր Տէր Պարսամ որդի Ոհան... գրեցի:

Թ. 16ա.—Ես Ջողայեցի տիրացու Սարգիսըս գրեցի, ամէն: Ես Ջողայեցի տիրացու Սարգիսըս գրեցի, ամէն:

Թ. 17բ.—Համբարձում եղև թվ. ՌՃԶԲ (1733 թ.—Ն. Մ.) մայիսի ԺԳ-ին, պատկերաւոր Բ. շափաթին ... որ մկրտեցաք Համբարձման (օ)րն:

Թ. 18ա.—Տէր Հայսուլուսեղի ՌՃՁԵ-ի (1736 թ.—Ն. Մ.) Փետրվր է:

Թ. 19բ.—Ես Ջողայեցի Մկրտիչ:

Թ. 22բ.—Էքնայտոս, Սարքիս, Ոհանէս, Ցունան, Թորոս, Մկրտ(ի)չ, ..., Անայ:

Թ. 27բ.—Ես Ջողայէցի:

Թ. 30բ.—Համբարձում եղև թվին ՌՃՁԹ (1740 թ.—Ն. Մ.) մայիսի ԺԳ-ին, պատկերաւորք Այբ. շափաթին, մկրտեցաք համբարձման օրն:

Թ. 31ա.—Մկրտիչ, Համբարձում, Համբարձում:

Թ. 31բ.—Համբա, Աւետիս էս հասէ շատ...:

Թ. 33բ.—Համբարձումըն եղև թվ.: Թորոսըն եղև թվին ՌՃԱ (1651 թ. Ն. Մ.):

Թ. 35բ.—Գրեայլաւ, գրեայ զի. գաղիւրն մեռան ի.. ողո...:

Թ. 37բ.—Ես գիրս Տէր Առաքելի որդի եղի այս գրեցի, որ ես էի յԼ տարուանս իմում ՌՃԿԴ-կրին (1719 թ.—Ն. Մ.):

Թ. 38ա.—Ես Տէր Առաքելի որդի, Աստուրի որդի Խաչատուրս գրեցի ... ԻԱ տարեոյ թվականիս իմում ... ԺԶ-ին պատկերօրն...:

Թ. 38բ.—Համբարձումն եղև թվին ՌՃՁԹ-ին (1740 թ.—Ն. Մ.) մայի(սին):

Մկրտիչն եղև թվին ՌՃՁԴ-ին (1735 թ.—Ն. Մ.), Աւետիքն ու Գաբրիէլի ի սուրբ Աստուածածնայ Խոր Վիրապին Սուրբ Գրիգոր մերոյն Լուսաւորչին և ամսեան ապրիլի Է-ին պատկերաւոր շափաթին եղաւ:

Թ. 40ա.—Պողոս Աղայան եղև թվին ՌԲՃԱ-ին (1752 թ.—Ն. Մ.) յունվարի ԻԷ-ին առաջաւոր պահոց զօր է չափաւորին:

Թ. 40բ.—Ցայն մորում որդիացաւ, իսկ այլ քոյ... Մկրտիչ...:

Մանուէլ եղև թվ. ՌՃՂԳ-ին (1744 թ.—Ն. Մ.):

Թ. 42բ.—Սարգիսըն եղև թվն. ՌՃԻԴ-ին (1675 թ.—Ն. Մ.) յուլիսի ԺԱ օրըն որ ասի պատկերաւոր Վարդէվառին յետ ութ օրէից կիրակին:

... և Տէր Աստուած նասիպերաց արժանացաւ ի կարգ քահանայութեան որ և Տէր Սարգիս անվանեցաւ ձեռամբ իւր եղբօրն Իգնատիոս վարդապետէն (թ. 43ա) ի թվականիս ՌԲՃ-ին (1751 թ.—Ն. Մ.) փետրվարի ԻԴ-ին, պատկերաւոր Թէոդորոսին կիրակէին:

Թ. 46բ.—Ողորմի Քրիստոս ըստացողի գրց. Մըխլան, և կնոջն Աննային. դստերն Գարիանէ:

Թ. 48բ.—Միրանենց տունըն կօչեցանք թվին ՌՃՂԴ-ին (1745 թ.—Ն. Մ.):

Թ. 53բ.—Համբարձում:

Թ. 55ա.—(Գրությունն անընթեռնելի է):

Թ. 56բ.—Ջողայեցի, այս գիրս: Ես Ջողայեցի:

Թ. 58ա.—Մաթէոսըն եղև թվին ՌՃ (1651 թ.—Ն. Մ.):

Թ. 59բ.—Մկրտիչ Չալապին եղև թվին ՌՃՁԷ (1738 թ.—Ն. Մ.), Աւետիքըն Գաբրիէլ ի Սուրբ Աստուածածնայ և ի Խոր Վիրապին սրբոյ Գրիգորի մերոյ Լուսաւորչիին և ամսոյն ապրիլի Է-ին պատկերաւոր շափաթին:

.....ԺԶ-ին յետ ութ աւուրըն մայրըն առ Աստուած փոխվեացաւ:

Թ. 60ա.—Մկրտիչ եղև:

Թ. 60բ.—Երկրորդ Թորոսն եղև թվիս հայոց ՌՄԲ-ին (1753 թ.—Ն. Մ.) նամսեանն յունիսի ԻԸ, 28: Այս գիր թվիս գրեցի ես Իգնատիոս վարդապետս որ ավ յինքն մեծանայ և այս կարդայ և զիս յիշէ:

Թ. 63բ.—Մկրտիչ:

Թ. 68ա.—Համբա(ղձում), Մաթէոս:

Թ. 69ա.—Համբարձում եղև թվին ... մայիսի...:

Թ. 69բ.—Անայն եղև թվին ՌՃԸ-ին (1659 թ.—Ն. Մ.) փետրվարի ամսոյ որ անայ...:

Թ. 71ա.—Համբարձում...:

Թ. 72բ.—...Ոտոհանէս:

Թ. 73բ.—Քաչի գործ է քեշ առաջին աւուրն Արարատ:

Թ. 76ա.—Համբարձումըն եղև թվին ՌՃՁԹ (1740

թ.—Ն. Մ.) մայիսի ԺԳ-ին պատկերաւուրն Բ. շաբաթին, որ մկըրտեցաք համբրձման (օ)րն:

Թ. 77բ.—Մեղայոր ես դատայորին ևն...:

Թ. 78բ.—Սարգիսըն եղև թվն. ՌՃՀԴ-ին (1725 թ.—Ն. Մ.) յուլիսի ԺԱ-ին, օրն որ ասի պատկերաւուր Վարդէվառին յետ ութ օրէից կիրակէին:

Թորոսն եղև թին ՌՃՁԱ-ին (1732 թ.—Ն. Մ.) մեծ պահոցն առաջին չորեքշաբաթին Փետրուարի ԻԳ-ին...:

Նունոֆարն եղև ՌՃՁԳ-ին (1734 թ.—Ն. Մ.) օգոստոսի ԺԲ-ին ուրբաթի աւուր:

Թ. 79ա.—Մաթէոսըս եղև թվին ՌՃՂԸ-ին (1749 թ.—Ն. Մ.) փետրվարի Բ-ին, պատկերաւուր բարեկենդանին եշբթին:

Յովաննէսըն եղև թվին ՌՃՀԶ-ին (1727 թ.—Ն. Մ.) հոկտեմբերի ԺԵ պտկր.աւուր Գիւտ խաչի ուրբաթի:

Թ. 79բ.—Յունան եղև թվին ՌՃՀԹ (1730 թ.—Ն. Մ.) յառաջաւորաց պահոց ուրբաթին յունվարի ԻԳ-ին:

Թ. 92ա.—Թորոս եղև թին ՌՃ..:

Թ. 96ա.—Յունանըն եղև թվին ՌՃՀԹ (1730 թ.—Ն. Մ.) յառաջաւորաց պահոցըն ուրբաթին յունվար ԻԳ-ին:

Թ. 100բ.—Իմ սիլկի արբ այր Յութայ:

Թ. 101բ.—Համբարձումըն եղև թուական ՌՃԾԸՀԱ:

Թ. 103բ.—Համբարձումն եղև թին ՌՃՁ (1731 թ.—Ն. Մ.)

Թ. 107բ.—Մկրտիչն եղև թվին ՌՃ..:

Թ. 109բ.—Համբարձումն եղև:

Թ. 111բ.—Համբարձումն եղև թվին ՌՃՁԹ (1740 թ.—Ն. Մ.) մայիսի ԺԳ-ին պատկերաւուրն Բ. շաբաթին...:

Թ. 112բ.—Մկըրտիչն եղև թվին ՌՃՁԷ-ին (1738 թ.—Ն. Մ.) Աւետիքն Գաբրիելի ի Սբ. Աստուածածնայ ի Խոր Վիրապին Սուրբ Գրիգորի մերոյ Լուսաւորչին ամսեան ապրելի էին պատկերաւուրն շաբաթին:

Թ. 129բ.—Ցիշա Տէր և ողորմեայ Տէր Առագելն, և զիւր որդին Տէր Սարգիսն, և Տէր Սարգսին որդին Տէր Աստուածատուրն, և Տէր Աստուածայտուրին որդին Տէր Եղիան ... մի անտես առներ...:

Թ. 153ա.—Յոհաննէսըն եղև թվին ՌՃՀԶ-ին (1727 թ.—Ն. Մ.) հոկտեմբ(եր)ի ԺԵ-ին, պատկերաւուր Գիւտ Խաչին ուրբաթի անունցնք.:

(Երկրորդ պահպանակի ամբողջ երեսին կա անընթեռնելի մի գրություն, որ հաշիվների է վերաբերվում):

№ 327
ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Թերթերը՝ 107:—**Պրակները՝** 10, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Է՝ 4, Թ՝ 8, Ա՝ 11 թերթից ևն:—**Մեծությունը՝** 18,9×13,7×2,1 սմ.:—**Նյութը՝** դիմացկուն մաքուր հաստ թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ, վրան կպցված է մի թղթակտոր, որի վրա գրված է «Առաքել(ոց) կանոնքն»:—**Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հաստ թուղթ:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միապույն:—**Դատարկ թղթերը՝** 73ա, 74բ—75բ, 106բ—107բ:—**Տողերը՝** անհամաչափ, 18—23:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչը՝** անհայտ (հավանաբար Միքայել վարդապետ):—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** 17—18-րդ դարեր:—**Վայրը՝** անհայտ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—Առաքելոց կանոնքն է:

Թ. 65ա.—Թուղթ կիրակէի վասն մեղաց զգուշութեան, որ անկաւ յերկնից ի մեծս համբաւ քաղաքին Հռոմի ի ձեռն մեծ Փափին:

Թ. 73բ.—Ցանկ կանոն գրքոյս:

Թ. 76ա.—Աղօթք սրբոյն Գրիգորի հայրապետին: Օրհնութիւն առագաստի: Օգնութիւն է մեզ յանուանէ Տեառն, որ արար զերկինս և զերկիր: Աղօթք:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 72ա.—Այդ ով որդեակք իմ և հաւատացեալ ժողովուրդք դադարեցէք ի մեղաց և ի չար գործոց ձերոց և արարէք պտուղ արժանի արքայութեան (թ. 72բ) և զպատուիրանս գրոց մի անտես առնիցէք: Երանի քահանային որ զայս գիրս ընթեռնու առաջի ժողովրդեան և երանի այնոցիկ որ զայս գրեն և օրինակել տան և որք կարդան և որք յերկրէ երկիր տանին նոցա մեղացն թողութիւն շնորհեմ և Է (7) պորտուն, և զինչ խնդիրք ունին ի բարին կատարեմ և Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս: Ամէն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Առջևի կազմի ներսում) Գ. Ց.:

(Սկզբի պահպանակի վրա) № 232:

Թ. 1ա.—(Կա քառակուսի մի կնիք) 1,4×1,3 սմ.), որի վրա գրված է) «... Ծռ. ... ... Միքայէլ...»:

Թ. 106ա.—(Կա էլիպսաձև մի կնիք (1,4×1,2 սմ.), որի վրա գրված է) «Միքայէլ վարդապետ»:

№ 328
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Թերթերը՝ 44:—**Պրակները՝** 4, յուրաքանչյուրը 10-ական թերթից, բացի Դ՝ 14 թերթ:—**Մեծությունը՝** 19,1×12,2×0,3 սմ.:—**Նյութը՝** կապտավուն բարակ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** վատ, սկզբից և վերջից պակասավոր է:—**Գրությունը՝** միապույն:—**Դատարկ թղթերը՝** չունի:—**Տողերը՝** 22:—**Գծումներ՝** չունի:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** 18—19-րդ դարեր:—**Վայրը՝** անհայտ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Զեռագիրը Թովմա Մեծոփեցու պատմության մի հատվածն է):

№ 329
ԱՂՕԹԱԳԻՐՔ

Թերթերը՝ 16:—**Պրակները՝** 8, յուրաքանչյուրը 2-ական թերթից:—**Մեծությունը՝** 18,3×11,6×0,6

սմ.:—**Նյութը՝** դիմացկուն դեղնավուն թուղթ: Միայն 5, 6, 11, 12, 15 և 16 թերթերը կապույտ են: Թուղթն անգլիական է, վրան կա Էլիպսաձև մի կնիք գործարանին պատկանող: Վրան գրված է Superfine-satin և կա թագի նկար:—**Կազմը՝** հաստ ստվարաթուղթ, որի վրա ոսկեգույն զարդեր կան:—**Պահպանակները՝** սկզբում և վերջում երկուական հաստ կապույտ ծաղկավոր թուղթ:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միապույն:—**Դատարկ թղթերը՝** 1ա, 16ա և 16բ:—**Տողերը՝** 39:—**Գծումները՝** մատիտով բարակ գծեր են քաշված:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** թ. 2բ-ում նկարված Գրիգոր Նարեկացին, թ. 3բ-ում կա մի սիրուն գլխազարդ, որ ներկայացնում է վարդի մի թուփ, բացված երկու վարդեր և բազմաթիվ կոկոններ ու կակաչ տերևներ: Այս բոլորը շատ գեղեցիկ են: Բացի այդ գլուխների բովանդակության առաջին տառերը գրված են մեծատառ երկաթագրով և ոսկեգույն:—**Գրիչը և ծաղկողը՝** Մկ. Մն. (շատ հավանաբար Մկրտիչ Մանուկ):—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1 ապրիլի 1839 թ.:—**Վայրը՝** Օրթագուղ, Կոստանդնուպոլիս:—**Ծանոթություն՝** ձեռագիրն ստացվել է նվեր Ստամբուլից Տիկին Նվարդ Մալխասից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Գրիգոր Նարեկացու աղոթքները շաբաթվա յուրաքանչյուր օրվա համար, այսպես).

Թ. 3բ.—Կիրակի առաւր, ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ (կրկնվում է ամեն օր): ԺԷ:

Թ. 5ա.—Երկուշաբթի առաւր: ԺԸ:

Թ. 7ա.—Երեքշաբթի առաւր: ԼԵ:

Թ. 8բ.—Չորեքշաբթի առաւր: ԿԳ:

Թ. 10բ.—Հինգշաբթի առաւր: ՀԱ:

Թ. 13ա.—Ուրբաթի առաւր: ՀԴ:

Թ. 15ա.—Շաբաթի առաւր: ԺԶ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 2բ.—Մ. Մ.:

Թ. 3ա.—Նարեկ գիրք աղօթից, Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հոգևկիր հոնտորի:

Առաւր պատշաճի:

Ձեռագրեալ ի թուին Քրիստոսի Տեառն մերոյ 1839, և մերոյս ՌՄՁԸ: Ցօրթագիւղ: Մկ. Մն.: Ապրիլ 1:

Թ. 15բ.—Վախճան: Ն. Մ. Մ.:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Ձեռագրում կա մի թղթակտոր, որի վրա գրված է հետևյալը). Տ. Նուարդ Մալխաս, Şalgisi sok. 10, Turan Cad., Istanbul, Turkiye:

№ 330

ԱՒԵՏԱՐԱՆ

Թերթերը՝ 234 (1Ա+233):—**Պրակները՝** 20, յուրաքանչյուրը 12-ական թերթից, բացի Ի՝ 9, Բ և ԺԹ՝ 10, Ա և Ժ՝ 11, Զ՝ 14:—**Մեծությունը՝** 19× 14,5× 2,7 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստարակ բարակ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** շատ վատ և անմխիթար: Գտնվում է քայքայված վիճակում: Ցեցերն ու խոնավությունը կատարել են իրենց մեծ ավերը:—**Գրությունը՝** երկսյուն:—**Դատարկ թղթերը՝** 1Ա, 117բ, 118ա, 202ա, 202բ և 203ա:—**Տողերը՝** անհամաչափ, 21—23:—**Գծումներ՝** չունի:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** ունի միջակ որակի մանրանկարչություն: Ձեռագրում կան չորս ավետարանիչների մեկ էջանոց նկարները (թթ. 1Աբ, 75բ, 118բ և 203բ), ինչպես նաև չորս խորաններ (թթ. 1ա, 76ա, 119ա և 204ա): Կան նաև բազմաթիվ թոչնագրեր և լուսանցազարդեր:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 17—18-րդ դարեր:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** քայքայված սույն ձեռագիրը նվեր է ստացված Կալկաթայի եկեղեցուց: Ըստ երևույթին 1920-ական թվականներին այն պատկանել է Բոմբեյի հայոց եկեղեցուն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1Աա.—(Կա կլոր մի կնիք, 4,2 սմ. տրամագծով, որի վրա անգլերեն գրված է հետևյալը).

HOVAKIM BARSEGHIAN,
Armenian Priest of St. Peter's Church,
Ord. 1912—BOMBAY.

(Կնիքի կենտրոնում մի խաչ կա):

(Այս կնիքը կրկնվում է նաև հետևյալ էջերում՝ 3ա, 73բ, 75ա, 117ա, 118ա և 203ա):

Թ. 75ա.—1926 թ. Յուլիսի 14-ին նշանակելով էջերը և կնքելով եկեղեցական կնիքով, օրինակած եմ և բոլոր յիշատակարանները մանրամասնութեամբ:

Յովակիմ քահ(անայ) Բարսեղեան.

Վիճակաւոր Ս. Պետրոս Եկեղ(եցու).

1921—1927 Bombay:

(Շարունակելի)